ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի 31-ը օգոստոսի 2018թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Մ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. *Գիտխորհրդի աշխատանքային պլանի հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
2. *Գիտխորհրդի կազմի հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *Ուսումնական գործընթացի կազմակերպում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
4. *2018-19 ուս. տարվա I կիսամյակի դասացուցակների հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
5. *Անվանական կրթաթոշակի նշանակում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2018-19 ուստարվա ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանը՝ կցվում է արձանագրության տեքստին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ք. Վ. Օթարյանը, Կ. Հ. Հովսեփյանը նշեցին, որ ֆակուլտետի գիտխորհրդի պլանը կազմվել է ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան և առաջարկեցին ներկայացնել հաստատման:

Ընդհանուր քննարկումից հետո առաջարկվեց հաստատելու 2018-19 ուստարվա I կիսամյակի գիտխորհրդի աշխատանքային պլանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2018-19 I կիսամյակի ուստարվա գիտխորհրդի աշխատանքային պլանը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը ներկայացրեց գիտխորհրդի նոր կազմը.

1. Զաքարյան Մանվել Աշոտի- ֆ.մ.գ.թ. դոցենտ, դեկանի ժ/պ, նախագահ
2. Ցուցուլյան Արտակ Վոլոդյայի-Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ,մեթոդ խորհրդի նախագահ, անդամ
3. Գասպարյան Հռիփսիմե Սերյոժայի-ֆակուլտետի քարտուղար, քարտուղար
4. Գուլակյան Գեղամ Վոլոդյայի-արհմիության նախագահ, անդամ
5. Հովակիմյան Աննա Սեդրակի- տեխ.գ.թ. դոցենտ, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, անդամ
6. Սիմոնյան Գևորգ Սարգսի ֆ.մ.գ.թ., Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար
7. Աթոյան Միեր Սերգեյի- ֆ.մ.գ.թ., Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ, անդամ

8. Հովսեփյան Կարեն Հայկի- Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ասիստենտ, անդամ

9. Օթարյան Քնար Վլադիմիրի- Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, անդամ

10. Հակոբյան Արթուր Պարգևի- Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դասախոս, անդամ

11. Ներսիսյան Լիանա Մելիքի-ՈՒԽ նախագահ, անդամ

12. Օրդինյան Աղավնի Արարատի-ՈՒԳԸ նախագահ, անդամ

13. Թիրաբյան Մարսպետ Պարգևի-Իջևանի թ.1հիմնական դպրոցի ինֆորմատիկայի ուսուցիչ

14. Քոչարյան Դիանա Գագիկի- ՔԿԳ II կուրսի ուսանողուհի

15. Հակոբյան Գենյա Ֆլոբերի-ԻԿՄ II կուրսի ուսանողուհի

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու ֆակուլտետի գիտխորհրդի կազմը:

Օրակարգի երրորդ հարցի շուրջը հանդես եկավ ֆակուլտետի գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Ներկայացրեց նոր՝ 2018-19 ուսումնական տարվա I կիսամյակի ժամանակացույցը, ներֆակուլտետային գործընթացի կազմակերպման հետ կապված ընթացիկ հանձնարարականները՝ ընդգծելով, որ ֆակուլտետում անհրաժեշտ է պահպանել ուսումնական պրոցեսի պահանջներին համապատասխան կարգ:

Օրակարգի չորրորդ հարցի մասին հանդես եկավ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2018-19 ուստարվա I կիսամյակի դասացուցակները ըստ մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով, ըստ ամբիոնային ուսումնական ծանրաբեռնվածության պլանների:

Դասախոսների պահանջարկ չկա, ըստ դասաժամերի բաշխվել են բոլոր առարկաները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի դոցենտ Գ. Ս. Սիմոնյանը: Նա նշեց, որ դասացուցակը կազմվել է ուսումնական պլանին համապատասխան: Համակարծիք լինելով ներկայացված դասացուցակին նա առաջարկեց հաստատել 2018-19 ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

Այնուհետև ելույթ ունեցան Գ. Վ. Գուլակյանը, Ք. Վ. Օթարյանը և ուրիշներ: Նրանք համակարծիք էին ներկայացված դասացուցակին և որոշեցին ներկայացնել տնօրենություն հաստատելու:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2018-19 ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

Այնուհետև դեկանի ժ/պ Մ. Ա. Զաքարյանը օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ ներկայացրեց ֆակուլտետի անվանական կրթաթոշակի հավակնորդ ,,Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտության,, չորրորդ կուրսի ուսանողուհի Անգին Հրաչյայի Ծատուրյանի թեկնածությունը, որը հավակնում է անվանական կրաթոշակի:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին 2018-19թթ. ուստարվա I կիսամյակում `§Համլետ Կարայանի¦ անվան անվանական կրթաթոշակ նշանակել ,,Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտության,, չորրորդ կուրսի ուսանողուհի Անգին Հրաչյայի Ծատուրյանին չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն, պատշաճ վարքագիծ դրսևորելու և հասարակական ակտիվ գործունեության համար:

ՆԱԽԱԳԱՀ Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ